ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման հնարավորությունները «Պատմություն» ինտեգրված դասընթացի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Նարե Մալինցյան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հարթաշենի միջն. դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԻՏ. Շալունց Գայանե

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն …….…….… էջ 3

2.Գլուխ 1: Ուսուցման ժամանակակից մեթոդներ ……..……..…էջ 5

3.Գլուխ 2: Ինտեգրումը կրթական համակարգում ……..…..…... էջ 8

4.Գլուխ 3: Ինտեգրված դասի պլան …….….էջ 12

5.Հետազոտություն …….…..…… էջ 15

6.Եզրակացություններ …… էջ 16

7.Օգտագործած գրականության ցանկ ……..…էջ17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը գիտելիքի ձեռքբերման նկատմամբ սովորողների հետաքրքրության խթանումն է: Բավականին թույլ տարբերակ է ավանդական տիպի դասերի կազմակերպումը նոր սերնդի համար, որն, ի տարբերություն ավագ սերնդի, ավելի ինքնուրույն է, ունի լավ զարգացած ինքնագիտակցություն, կարող է հստակ պատկերացնել իր պահանջները, և, որ ավելի կարևոր է, հնարավորություն ունի օգտվելու տեղեկության տարբեր աղբյուրներից: Ուստի ավանդական (պատմողական, բացատրական) դասը, որպես կանոն, նրանց չի կարող բավարարել: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությունը դասավանդման գործընթացում: Դասապրոցեսը էլ ավելի արդյունավետ կլինի, եթե, ժամանակակից մեթոդների հետ միաժամանակ, ուսուցման գործընթացը կազմակերպվի միջառարկայական կապերի հաստատման միջոցով: Ինտերգրված դասը իր բնույթով զարգացնող է, բազմաբաղադրատարր և ապահովում է աշակերտների կարողությունների և հմտությունների զարգացումը:

Թեմայի հիմնական նպատակները՝

1. Ծանոթանալ ուսուցման ժամանակակից մեթոդներին,
2. Խոսել կրթական համակարգում ինտեգրման մասին,
3. Անդրադառնալ ինտեգրված դասերի տեսակներին,
4. Ինտեգրված դասի պլանի միջոցով ներկայացնել վերջիններիս արդյունավետությունը:

Աշխատանքում առաջադրված են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել ուսուցման ժամանակակից մեթոդները,
2. Ծանոթանալ «ինտեգրված դաս» հասկացությանը,
3. Վերլուծել միջին դպրոցում ինտեգրված դասի կազմակերպման բնույթը
4. Կատարել հետազոտություն՝ պարզելու, թե որքանով են աշակերտները ներգրավվում ինտեգրված դասապրոցեսին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, հետազոտությունից և եզրակցություններից:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված են ուսուցման ժամանակակից մեթոդներ:

Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում ինտեգրված դասհասկացությանը:

Երրորդ գլխում ներկայացված է ինտեգրված դասապրոցեսի պլան-կոնսպեկտ՝7-րդ դասարանի համար:

Կատարվել է նաև **հետազոտություն** ինտեգրված դասերին մասնակցած աշակերտների շրջանում, որի արդյունքները նույնպես ներառված են աշխատանքի մեջ:

Աշխատանքի արդյունքում կատարված **եզրակցությունները** տեղ են գտել եզրակացություններ գլխում:

ԳԼՈՒԽ 1: ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

Հասկացությունների քարտեզ (մտքերի քարտեզագրում): Քարտեզը սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որի շուրջ գրի են առնվում ուղեկից հասկացությունները, մտքերն ու գաղափարները: Քարտեզի «ճյուղերը» տարածվում են նաև ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող» բառի հետ, իսկ միևնույն «ծնողն» ունեցող բառերը վերցվում են մի շրջանի մեջ՝ որպես ուսումնասիրման մեկ ոլորտ:

Գծագրական դասակարգիչներ: Դասի տարբեր փուլերում կարելի է օգտագործել գծագրական դասակարգիչներ (գրաֆիկական կազմակերպիչներ), որոնք ավելի տեսանելի են դարձնում երևույթները, հասկացությունները և դրանց միջև գոյություն ունեցող կապերը, օգնում են քննարկումները դարձնել առավել շոշափելի և արդյունավետ[1]:

Զարմանք, անսպասելիություն: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի զարմանալի մտքերը գրավում են նրան ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե 1903 թ.-ի հունիսի 12-ի օրենքը Խրիմյան Հայրիկը ընդուներ:

Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը: Օրինակ՝ պատկերացրեք դուք Իսրայել Օրին եք: Ինչպե՞ս կվարվեիք:

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն: Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վարկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն

[1] Սարգսյան Ա., Հայոց պատմություն: VIII- IX դասարաններ: Ուսուցչիձեռնարկ, Երևան, 2013, էջ 31:

տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

Ֆրայերի մոդելը: Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժնի կենտրոնում ռում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այս հասկացության պատկերայաին արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերվում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Գիտելիքի դոմինո: Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1: Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2: Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3: Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4: Հաջորդաբար շրջանաձև դրվում են սեղանին բոլոր քարտերը:

Քայլ 5: Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը: Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6: 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Վարդ, փուշ, բողբոջ:

Վարդ- Նշեք մեկ բան, որ լավ հասկացաք:

Փուշ- Նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք:

Բողբոջ-Նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ծագեց:

Տասը տարի անց: Նշեք մեկ բան, որը կուզենային հիշել այս թեմայից 10 տարի անց[2]:

Էստաֆետ:

– Մասնակիցները բաժանվում են 4-5 խմբի:
– Խմբեր համարակալվում են:
– Յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ ծրար, որի վրա գրված է հարց: Տրվում է որոշակի ժամանակ, որի ընթացքում խմբերը ծանոթանում են հարցին, մշակում և ծրարից հանելով խմբի համարին համապատասխանող թերթիկը՝ վրան գրում են իրենց խմբի պատասխանը, դնում ծրարի մեջ:
– Ազդանշանից հետո ծրարը փոխանցում են հաջորդ խմբին: Գործողությունը կրկնվում է, մինչև յուրաքանչյուր խումբ լրացնի բոլոր հարցերի պատասխանները:Նախապես բոլոր հարցերը գրվում են պաստառների վրա:
– Ամփոփման ժամանակ բացվում են բոլոր ծրարները, ընթերցվում բոլոր պատասխանները: Միանման պատասխանները խմբավորվում են և մյուս պատասխանների հետ միասին գրվում համապատասխան հարցերի տակ:

Պոպ կորն: «Պոպ կորնը» վարժանք է, խմբային աշխատանքի կազմակերպման հետաքրքիր ու ցուցադրական հնար:

Անվանումը անգլերեն ծգում ունի և թարգմանաբար նշանակում է եգիպտացորենի հատիկներ: Աշխատանքի կազմակերպման այս ձևը արտացոլում է եգիպտացորենի հատիկների պատրաստման գործընթացը, երբ նրանք որոշակի ջերմաստիճանում սկսում են տաքանալ և ճտճտալով՝ վերև թռչել:

«Պոպ կորնը» կիրառվում է որևէ հարցի, խնդրի վերաբերյալ սովորողների մտքերը լսելու, հավաքելու, մտքներն ու նրա շուրջ քննարկումը թեժացնելու նպատակով: Արդյունավետ այն դեպքում, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարումներ: Ենթադրվում է արագություն և արագ կողմնորոշում, ուշադրության կենտրոնացում և մասնակիցների՝ իրար հաջորդող ու համաձայնեցված գործողություններ[3]:

---

[2] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 24:
[3]Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 16, 81:

ԳԼՈՒԽ 2: ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Դասը չի դիտվում աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել: Ավանդական դասի կառույցի շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ձանձրույթ: Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասը խթանում է հետաքրքրություն և աշխուժություն:Շատ շուտով ակնհայտ դարձավ, որ աշակերտների արձագանքը ինտեգրված ուսումնական ծրագրերին շատ դրական է: Նրանք շատ են ոգևորվում իրենց ուսումնառությամբ:

Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով: Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է: Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը: Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:

3.Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:

4. Ուսումանական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից:

Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները,

մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից[4]:

Ինտեգրացված ուսուցման նպատակներն ու խնդիրները տարբեր են, օրինակ՝

1. Գիտելիքների միջառարկայական ինտեգրացումը շատ ավելին է, քան միջառարկայական կապերի ներկայացումը: Այն ավելի շատ ստեղծագործական մոտեցում է պահանջում:

2. Ինտեգրացված դասի կազմակերպումը պետք է ապահովի սովորողների (նաև դասավանդողների) հետազոտական գործունեություն, որով և պայմանավորված է ինտեգրացման նպատակամետությունը: Այդ գործունեությունը պետք է զարգացնի պատճառահետևանքային կապեր բացահայտելու և վերլուծելու կարողություն, տրամաբանական մտածողություն, գիտելիքը դարձնի ամբողջական ու հիմնարար: Մյուս կողմից, որևէ երևույթի հնարավորինս բազմակողմանի դիտարկումը ճանապարհ է բացում բացահայտումների, «հայտնագործությունների» համար, որն ապահովում է ուսումնառության հուզական բաղադրիչը և կարևոր պայման է գիտելիքի արժևորման ու ինքնաբավարարման, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ձեռք բերելու համար: Սովորողների հետազոտական գործունեության կազմակերպման առավել հարմար տեխնոլոգիան համագործակցային ուսուցումն է, ուստի այս ոգով կրթված երեխան սոցիալականցվում է և «սպառողից» դառնում է մշակույթի ու այլ արժեքների «արարող»:

3. Կարևորվում է նաև ինտեգրացված դասի հումանիստական ուղղվածությունը: Դա նշանակում է, որ մաքուր գիտական գիտելիքների արժևորումից զատ, անհրաժեշտ է կարևորել նաև յուրացված ակադեմիական գիտելիքների կապը կյանքի հետ, դրանց բացահայտումը շրջապատող աշխարհում կատարվող երևույթների մեջ:

Բացի վերը նշվածից շատ կարևոր է, դասավանդողի կողմից ճիշտ ցուցաբերված մոտեցումը և նպատակի հստակ ձևակերպումը:

- ուսումնասիրել ինտեգրացվող առարկաների ծրագրային համապատասխանությունը:

[4]Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի բանբեր, N 2 (57), Երևան, 2021, էջ 84-87:

- գնահատել դասարանի ընդհանուր պատրաստվածության մակարդակը և գործողությունները համապատասխանեցնել սովորողների տարիքային ու պատրաստվածության մակարդակին:

- կատարել ներգրավված մանկավարժների և սովորողների գործողությունների դերաբաշխում:

- ապահովել դասի տարբեր փուլերում ինտեգրացված առարկայական գիտելիքների փոխկապակցվածություն:

- պլանի նախագծումից և դասի ընթացքը մտովի պատկերացնելուց հետո մշակել գնահատման ենթակա առաջադրանքներ, գիտելիքների գնահատման չափանիշներ ու սանդղակ:

- ապահովել դասի կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներն ու դիդակտիկ նյութերը, սարքավորումները՝ դրանք նախօրոք փորձարկելով:

Ուսուցման կազմակերպման նոր ուղին հենվում է ՀՀ-ում իրականացված կրթության բարեփոխումների նախորդ փուլերում մանկավարժների ու սովորողների ձեռքբերումների վրա: Դրանցից հատկապես նշենք համագործակցային ուսուցման ու ՏՀՏ-ի կիրառումով ինտեգրացված ուսուցման հմտությունները, որոնք կարևորվել են այն ժամանակաշրջանում, երբ կրթության առաջնահերթ խնդիրն էր՝ մարդուն սովորեցնել ապրել տեղեկատվական աշխարհում, ձևավորել ՏՀՏ-ից օգտվելու մշակույթ: Ինտեգրացված նոր մակարդակի ու տեսակի դասերի կազմակերպման համար այսօր արդեն ուսուցչից պահանջվում է ՏՀՏ-ի օգտագործման հնարավորությունը ծառայեցնել տարբեր խնդիրներ ավելի արագ ու արդյունավետ լուծելուն և սովորողի ինքնուրույն, հետազոտական ու ստեղծարար գործունեությունը զարգացնելուն: Եվ չպետք է մոռանալ Նեյլ Փոստմանի նախազգուշացումն այն մասին, որ չնայած տեխնոլոգիան առավել հասանելի, արագ ու կիրառական է դարձնում տեղեկատվությունը, բայց «համակարգիչը չի կարող մեզ տալ կազմակերպված, բարոյական աշխատանքային ոլորտ: Այն չի կարող ասել, թե որ հարցերն են հնչելու արժանի»[5]:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

[5]Բնագետ Գիտահանրամատչելի և գիտամեթոդական բնագիտական հանդես, Հունվար-Մարտ 2019, 1, էջ 15-17:

- Միջառարկայական (interdisciplinary)
- Բազմառարկայական (multidisciplinary)
- Անդրառարկայական (trans disciplinary):

Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից[6]:

Ստորև ներկայացված է «Հայոց պատմություն» առարկայի հնարավոր ինտեգրված դասերի օրինակ:



[6] Փնջոյան Տ., Ինտեգրումը կրթական գործընթացում, էջ 402-403:

ԳԼՈՒԽ 3: ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԼԱՆ

Ուսուցչի անուն՝ Նարե Մալինցյան

Դասարան՝7-րդ

Ամիս, ամսաթիվ՝ 07.09.2023

Աշակերտների թիվը՝ 14

Դասի թեմա՝ Հայկական լեռնաշխարհն ու հայերը

Դասի տիպը՝ Համակցված, ինտեգրված

Գերակշռող առարկա՝ Հայոց պատմություն

Ինտեգրված առարկա՝ Աշխարհագրություն, հայոց լեզու, գրականություն, հանրահաշիվ

Նպատակը՝

Հայոցպատմություն

- Ստանա հայոց հայրենիքի՝ հայկական լեռնաշխարհի պատմաաշխարահագրական պայմանների վերաբերյալ գիտելիքներ
- Ներկայացի Հայաստանի պատմավարչական հիմնական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր

Աշխարհագրություն

- Զարգացնել գիտելիքներ աշխարահգրական քատրեզների և դրանց կազմման մեթոդների վերաբերյալ, ձևավորել քարտեզաչափական խնդիրների լուծման հնտություններ:

Հայոցլեզու

- Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարցադածի կարևոր գաղափարները (հասկացությունները), տեղանունները,իմանա ճիշտ գրելաձևերը:

Կարողանա իր մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, այնպես, որ խոսքը համապատասխանի լսարանին:

Ներկայցնել դրվագներ առասպելներից, ավանդազրույցներից:

•

Վերջնարդյունքները՝ ըստ առարկայական չափորոշիչի՝

Հայոց պատմություն

- Նկարագրի Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարահագրական պայմանները, առանձնահատկությունները, պատմավարչական բաժանումները:

Աշխարհագրություն

- Ճանաչել քարտեզներում կիրառվող պայամանական նշանները կարդալու և ըստ նշանակության օգտագործելու եղանակները
- Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը, նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:
- Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ զարգացնելով հետազոտական հմտություններ:
- Կիրառի քարտեզներ ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու համար:
- Ուսումնասիրի և մեկնաբանի զանազան քարտեզներ՝ ձևավորելով հետազոտական հմտություն:

1. **Կարողունակություններ-** Լեզվական կարողունակություն և գրագիտություն

   Սովորել սովորելու կարողունակություն

   Մշակութային կարողունակություն

   Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Միջառարկայական կապեր

Աշխարհագրություն, իմ հայրենիքը, հայոց լեզու, գրականություն

Անհրաժեշտ նյութեր, ռեսուրսներ – գիրք, տետր, քարտեզ, կպչուն թղթեր, համակարգիչ

Դասի ընթացքը

Սովորողները Հայկական լեռնաշխարհն ու հայերը թեմայից նախօրոք ստացել են հանձնարարականներ, կատարել հետազոտություն ինտեգրված առարկաներից: Ուսուցիչը դասարանը բաժանել է խմբերի՝ **պատմաբաններ, աշխարհագետներ, հայագետներ:**

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած հետազոտությունը .

Պատմաբանները ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի դերը հայ ժողովրդի կյանքում,նրա հետ կապված կարևոր տեղեկությունները ներկայացնում են պատմության տեսանկյունից ,օգտագործում են Աշխարհացույց կրթական հարթակը:

Աշխարհագետները ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի դիրքը ,սահմանները լեռները լճերը, գետերը՝ հավաքած հավելյալ տեղեկություններով,օգտագործելով Հայկական լեռնաշխարհի քարտեզը,

Հայագետների խումբը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի տեղանունների, անունների ծագման պատմությունները՝ հարակից ներկայացնելով գրական այն ստեղծագործությունները՝ առասպելները, ավանդազրույցները:

Խմբերի աշխատանքները քննարկվում և կատարվում է հետադարձ կապ ու գնահատում:

Գիտեինք	Իմացանք

Տնային աշխատանք. ուսումնասիրել և ներկայացնել բնակավայրի պատմական անունները, գետերը, լեռները: Կազմել բնակավայրի քարտեզ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ինտեգրված դասը տարբեր առարկաների, ուսումնական նյութերի մեջ մի ամբողջություն է՝ փոխադարձ իրար լրացնող՝ և՛ իմաստով, և՛ձևով: Այն չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ:

Հետազոտությունը անց է կացվել Հարթաշենի միջնակարգ դպրոցում:

Հետազոտության թեման՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման հնարավորությունները Պատմություն ինտեգրված դասընթացի դասավանդման ընթացքում»

Հետազոտության առարկան՝ աշակերտների ակտիվության մակարդակը ժամանակակից մեթոդների կիրառությամբ հայոց պատմություն ինտեգրված դասաժամերին:

Տարբերակներ՝

- Ակտիվ
- Միջին
- Պասիվ

Հետազոտությանը մասնակցեցին 7-րդ դասարանի 14 աշակերտ:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ:
- Ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը:
- Ժամանակակից մեթոդների, հնարների և վարժությունների հիմքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեություն, գիտելիքի գործընթացում նրա անմիջական և ակտիվ մասնակցությունը:
- Ակնհայտ է, որ ուսուցման կազմակերպման նկատմամբ այսպիսի մոտեցումը ուսուցչից պահանջում է ընդհանուր մտավոր բարձր մակարդակ, համագործակցային հմտություններ, պատասխանատվություն ու շահագրգռվածություն: Ուստի արդյունավետ ու արժեքավոր ինտեգրացված դասի կազմակերպումը միաժամանակ բացահայտում է նաև ուսուցչի մասնագիտական ու ստեղծագործական ներուժը: Սակայն ամենակարևորը մանկավարժության մեջ սերն է իրեն վստահված մատաղ սերնդի և իր գործի նկատմամբ, քանզի բարի պտուղներ ծնվում են միայն սիրուց:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բնագետ Գիտահանրամատչելի և գիտամեթոդական բնագիտական հանդես, Հունվար-Մարտ 2019, 1, «Բնագետ» հրատ., 65 էջ:
2. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, 74 էջ:
3. Սարգսյան Ա., Հայոց պատմություն: VIII- IX դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013, «Զանգակ» հրատ., 95 էջ:
4. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի բանբեր, N 2 (57), Երևան, 2021, «Լինգվա» հրատ., 93 էջ:
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, 101 էջ:
6. Փնջոյան Տ., Ինտեգրումը կրթական գործընթացում, 407 էջ: